*Սբ խչս մխիթար(ա) կամաւն Այ*

Ծանոթություն.— *Շարունակություն չունի:*

## 135. Նախորդի կողքին

(Լուս. № 85)

*ԺԵ դարի վերջերքին*

Հրատարակված է՝ Ջալ 36—37, Վիմ 249



*Նկ. 85. Արձ. № 135:*

1 *Յուսով անմահին, ես՝ Յոհանէս արե-*
2 *գայ մահդասի, ի գեղջէն Աշտարակու,*
3 *միաբանեցա սբ Ածածնիս, ետու Բ չուրջառ*
4 *մախմուր յիշատակ ինձ եւ ծնողացն իմ(ո)ց*
5 *ի առ(ա)ջնորդութե սբ ուխտիս տր Բարսեղ*
6 *եպսի: Ով որ հանել ջանա սբ Ածածնէս՝*
7 *պատիժն Կաենին եւ գՍուդաին առցէ. ամէն*

Ծանոթություն.— *Ժամանակը որոշել ենք Բարսեղի առաջնորդության տարիներով: Մ. Բարխուդարյանցի Աղվանից երկիր, էջ 182 հիշատակված է այս Բարսեղը 1497 թվին:*